թէ այլ ոք յիսլամաց։ Արդ՝ փոյթ յանձին կալայ տալ զդաշնագիրս եւ զյետակարս զայս, որք խնդրեցին յինէն. և 'ի բովանդակ իշխանութենէ հրովարտակիս զուխտն Աստուծոյ, զդաշինս և զպարտիս Մարգարէին եւ Իսլամաց, յառաջնոց մինչեւ ցյետինս, զՀզոր պարտիս եւ զդաշինս իմ. զորօրինակ եւ Աստուած Մարգարէին, կամ 'ի ձեռն մերձաւոր հրեշտակին՝ վասն հնազանդութեան. և պարտաւորեցաւ կատարել զխոստումն՝ ուխտիւն Աստուծոյ։ Արդ՝ պաշտպանեցից և ես նախարարօք, իշխանօք և ամենայն Իսլամ ծառայիւք իմովք զՀեռաւորս նոցա, որք սփռեալ են 'ի սահմանս Տէրութեան իմոյ, 'ի նահանգս ցնահանգս. յանդորրու կացուցից, պաշտպանեցից զնոսա եւ զեկեղեցիս նոցին, որք են՝ մեծ եկեղեցին Ս. Յակոբայ՝ յարեւմտից հարաւոյ Երուսաղէմի՝ մերձ 'ի վանս Սիօնի եւ զեկեղեցիս Ս. Փրկչի, Ս. Հրեշտակապետին, Բեթղեհէմի և Նազարեթի, և 'ի տաճարին Ս. Յարութեան Գերեզմանն Քրիստոսի՝ յորմէ ելանէ լոյսն ըստ կարծեաց նոցին. զԳողգոթայն, զվերին և զստորին հարկս նորին. զեկեղեցին Ս. Յովհաննու և 'ի չրջակայս Երուսաղէմի, թէ 'ի ներքս եւ թէ յարտաքս, որք են սեպհականութիւնք ազգին Հայոց, որոց վասն չունին հակառակութիւնս ինչ օտար ազգք քրիստոնէից։ Նոյնպէս եւս նոցա, որպէս եւս Մարգարէն Աստուծոյ եւ հաւատարիմ բարեկամք նորին։ Եւ ըստ օրինակի նոցին եւս՝ զեկեղեցիս, զաղօթարանս, զտեղիս կրօնաւորաց, զբնակարանս անապատականաց ուր ուրեք և իցեն, 'ի լերինս, յայրս և 'ի փապարս և որք միանգամ յարակից են օրինաց և ստացուածոց նոցին, թէ 'ի ծովու և թէ 'ի ցամաքի, թէ յարեւելս և թէ յարեւմուտս, զորս պարփակեալ բովանդակէ հրաման իշխանութեանս, և Իսլամ ժողովրդոց ազգին իմոյ։ Փրկեցից զնոսա յամենայն նեղութեանց, 'ի բռնութեանց և 'ի զզուանաց և 'ի ծառայելոյ այլոց։ Վանեցից զթշնամիս նոցա անձամբ և Իսլամ ծառայիւք և հպատակօք իմովք, և ես թագաւորեցից 'ի վերայ նոցա. այսպէս յարգել եւ պաշտպանել զնոսա յամենայն անարգութենէ, և բառնալ զբռնութիւնս այնպիսի իրաց, զորս ածեն 'ի վերայ նոցա դաշնակից ազգք, որպիսիք են՝ կողոպտել և զրկել 'ի ժա-